ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ԱՐԾԱՐԾՈՂՆԵՐ

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ
Խմբագիր «L' Arménie» լրագրի



ՄԿՐՏԻՉ ՓՈՐԴՈՒՊԱԼԵԱՆ
Խմբ. «Արմինիա» լրագրի

Խմբագիր «Մշակ» լրագրի

ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐՈՒՆ

Հին աւերակ քաղաքներուն մէջով կանցնիմ տխրամած ոգւով։

Շուրջը տակի է ու մենաւոր։

Եւ երբոյն ձայնն է, որ կը լսեմ ա-տենաւոր և ծղրիդներուն միօրինակ երգն է, որ կը տարածւի փոշոտած ու չոր բուսերուն մէջ։

Միւռած, անշնչացած քարերն ընկած ճամբուս երկու կողմէն հին-հին դա-րուց մէջէն կուգան ու կանցնին։

Ասոնք չեն ըսեր, լուռ կը մնան և մունջի մրմունջով արտասուք կը հո-սեցնեն հոգուս մէջ։

Ջարդը հինաւուրց դարերուն մէջէն փոռոհով և ժխոր աղկերուն ոգին և պատմեն ինձի Ցո հզոր և աշխարհա-կալ կեանքիդ եղէջներէն։

Բաբելոն ըլլայ ան, թէ Աթէնք ու Անարզաբա—Անի՝ սիրելի են անոնք ինձի։

Չի անցած, զացած սերունդներն են իմ նախնիք։

Ագաժէն կուգամ ես և Եւայէն կառ-նեմ ծնունդ։

Լեզուս և ոգիս և արիւնս բռնւան, երակներս զգայիւն ու բարախուն ա-մենուն համար։

ԳՐՕՖ. ՅԱԿՈԲԵԱՆ
Հայկ. ժամի «Times»լր. խմբ.

Ցեղի ով կոատունները մէջէն գա-լով մարդուն կը ձօնեմ շունչս։

Ցեղի, ով Արամազդի սեղանէն եկող աղօթաւոր կը լեցնեմ բաժակս և քե-զի, ով հին աստուածներուն Ցրմապետ, կուգամ համբոյրս ցօղով դրօշմելու հնքս ճակատիդ։

Եւ այսօր մոռացութեան դարերուն մէջէն, յաւիտենական անցկլոց—տա պանակներուն մէջէն, ես կը տեսնեմ հին աշխարհի շիրիմներուն դալուկ և լսեր, կը լսեմ հին աշխարհի մեղոտ երգերուն ձայնը։

Ցեղի ով մեր Բաբելոն, Ալէքսան-դրիա, Մծբին ու Աթէնք կուգամ բուռ-վարիս ծխով ու լեզուիկի բուրմուն-քով օրհներգս երգելու և շունչս վրաղ ցօղելու։

Ցեղի ով Արամազդ, քեզի Աստղիկ ու Վահագն, Ցեզի...

Հոս քարերուն մէջէն մրմունջո կու-գայ...

Լսէ ինձի։

Կարա-Դարիւղ

ԶԱՐՕ-ԽԱԹՈՒՆ

(Տաճկահայ սոկումներից)

Ա.

Աղօթարանը նոր էր բացուած։

Ըրտեռնուած, տարօրինակ մի վվլուկ էր ընկել քիւրդական Գիւլա-Սօր գիւղում։ Ալեզարդ ոուսպիներ[1]) և պիրներ[2]), պատանի և երիտասարդ դորվիշներ[3]), մեծ ու փոքր լամուկներ[4]), մի-մի ջուալ վերցրած, վազում էին դէպի մօտակայ հայաբնակ Մ... գիւղը, որի ծխի քուլաները և հրեղէն բոցերը երկինք էին բարձրանում և բոսորային գոյնով շառագունում շրջակայ լեռների կատարները։ Հրացանի ճարճատիւնը, հրդեհուած շէնքերի ահեղադղորդ փլուզները, խառնուելով խառնիճաղանճ խուժանի ժխորային աղմուկի հետ, լեռները ու ձորերը էին թնդացնում։

Զարօ-խաթունը նոր էր արթնացել և անուշադիր դէպի դրսի անօրինակ աղմուկը, իր մազերն էր շտկում, բօֆլին[5]) ուղղում և քթի «խզէմ»-ը[6]) մաքրում։

—Խաթուն, դու հանգիստ քնել ես, իսկ գիւղը ողջ գիշերը ոտքի վրայ է,—յայտնեց նրան աղախինը։

—Ի՞նչ է պատահել, Գօզէ։

—Բոլոր հայերին կոտորում են, գիւղերն այրում, ոչնչացնում։

—Ո՞վ է կոտորում, ինչո՞ւ։

—Սուլթանի հրամանն է, խաթուն... Ֆիլայլիները գալիս են...Հայերը «րէգլըկ»[7]) են ուզում .. Սարի-Մոսկօֆի հետ միացել են... պիտի գան, մեզ բոլորիս կոտորեն .. Բա, գեաւուրներին ջնջում են—լաւ են անում... կոտորում են՝ մեծին, փոքրին, բոլորին, բոլորին կոտորում են...

—Ղիզէ[8]) խենթացել ես, ինչ է...

—Վալլա, խաթուն... Մ... գիւղն էլ թալանում են. մեր բոլոր գիւղացիք ամբողջ գիշերը կրում են հա կրում նրանց եղած-չեղածը... Մեր հարևան Հասօ-Ջնդօի հարս Խաղալը այնքա՜ն ապրանք է բերել, այնպիսի՛ սիրուն հայելիներ, լամպաններ, տպակեայ նախշուն ամանները, որ կը հիանաս։ Աթոռն, եթէ դու քնած չլինէիր, ես էլ կերթայի թալանի։

—Լաւ՛ը, յիմար...

Եւ Զարօ-խաթունը դուրս թռաւ, նայեց դէպի Մ.. գիւղը և ծնկներին զարկից.

—Վա՛յ լըմլըն բաւօ,[9] մեր տունը քանդուե՛ց..

—Աթոռն, խղճա՛ւ ես գեաւուրներին. լա՛ւ են անում, աչքներն էլ են հանում—այդ շուն անհաւատներին։

—Լաւ՛ը, յիմար, պրանով մեր տունն են քանդում...

—Ինչո՞ւ, խաթուն,—զարմացած աչքերը չռեց միամիտ Գօզէն։

—Մոսկօֆն ու ֆիդայիները կըգան, յետոյ դըբանց փոխարէն մեր քթածակերից կը հանեն։

—Ճի՛շտ ես ասում, խաթուն. վա՛յ, ինչ վատ բան են անում։

—Հապա՛... մերոնք յիմար են, չեն հասկանում, նամարդ օսմանլուի խօսքո՞վ են ընկնում։

Այդ միջոցին մի ղուրմ վազում էր, գլխիվայր պրկած մի մանկան, որը լեղապատառ ճչում էր, իսկ նրա հետից վազում էր մի հերարձակ հայ դեղձկուհի, քթի ու բերան արիւնաշաղախ և հրեաները չանգռտուած։ Նա կատաղի վազրի նման հասաւ իր կորիւնը յափշտակող դոքէին, մի ձեռքով բռնեց նրա կոկորդից և միւս ձեռքով խլեց զաւակին։ Դ.ղէն օգնութեան հասաւ դոքէին, բռնեց հայուհու թևերից և աղաւեց դոքէին, որը ճգնում էր նրա գրկից յետ խլել մանկան։

—Պէտք է թռնիրը պցեմ, պէտք է խորովեմ այդ քեաֆուրի լակոտին ..

Հայուհին այժմ այնպէս ամուր էր գրկել իր սըրտի հատորիկին, որ հազար դոքէներ այլևս չէին կարող դուրս կորզել նրան։ Թշւառ մանուկը շնչասպառ ճչում էր ձգձգումներից և կատաղի դոքէի վրէժխնդիր հարուածներից, երբ Զարօ-խաթունը մօտեցաւ։

Թո՛ղ, ղիզէ, թող երեխային։

—Խաթուն, «ալար ուտի խուրմ. ըսա»[10],—ասաց ա-

1. Մերունի աղոթարդ—սպիտակամորուք.
2. Պառաւ կին.
3. Աղջիկ.
4. Տղայ.
5. Գլխանոց.
6. Ականջաօղի պէս քթածակն անցկացնելու զարդ.
7. Իշխանութիւն-անկախութիւն.
8. Հիմար.

9. Վայ ինձ, հայրիկ—վրատաւոր բացականչութիւն.
10. Ատուծոյ սիրոյն լինի.

Հնչակեան եւ պաշնակցական Աղբիւր-Տարագի ցրիւ ամենահայ ԱՐՇԱԿ եւ կազմարար ՀՆԴԻՒՀԱՄՈՒ ոազմիկներ։

բիւնաշաւախ հայուհին աղերսագին և գրկած մանկան, չոքից Զարօ-խաթունի ծնկների առաջ։

Բարկութիւնից խելակորոյս, դռքէն սկսից լաց լինել և կատաղօրէն գոչել.

—Թողէք, պէտք է սպանեմ այդ քեաֆուրի կնոջը. պիտի նրա լակոտին շամփուրին դարկեմ, կոխեմ թէյ թոնիրն ու խորովեմ...

—Ինչո՞ւ, ղիզէ, ինչ է արել քեզ։

—Ո՞նչպէս թէ ինչ է արել, հայ է—քեաֆուր...

—Ախ՛ներ ես, ինչ է։

—Բոլորին, բոլորին պէտք է կոտորել. մեծ շէյխի հրամանն է... Հապի ալ-չիթ անիծարին[11] ուզեցի՝ խնայեցի, լակոտի վերան ծածկած շալն ուզեցի վերցնել՝ ձեռիցս խլից, ես նրա մազերը քաշեցի, նա էլ իմ մազերից բռնեց։ Հապա՝ մարդարէն կը նեղի քեաֆուրին, եթէ նա մուսուլմանի մազերից քաշի...թողէք, պիտի ծեածեմ, ղիմա-ղիմա անեմ, լակոտին էլ իր աչքերի առաջ ձգեմ կրակի բոցերի մէջ, խորովեմ, կուտ գարձնեմ...

Նա ուզեց նորից յարձակուել, բայց Զարօ-խաթունը գոռաց.

—Դէ, անղգամ, այս բոլէխս կասեմ՝ քեզ կտորկտոր կանեն... փչացած, անամօթ... Կոյր ես, դա հայ է՞... չե՞ս տեսնում՝ ճակատի կապոյտ խալը, խղճմտատեղ ծակած քիթը։ Եւ գանգատով դէպի հայուհին.—Աղջի, դու թանդուրակցի հզիզի Իսօյի հարսը չե՞ս...

Հայուհին շփոթուած էր, չըգիտէր ինչ պատասխանել։

—Դու մեր փուղից ես հկել, հա...ժա՞յրս է ուղարկել քեզ...

Թշուառ հայուհին նոր հասկացաւ խաթունի միտքը։

—Չէ, խաթուն, մեծ խաթունն ուղարկեց ինձ, որ քեզ մի ծածուկ և շատ կարեւոր պաղտնիք յայտնեմ երեկոյեան ուշ հասայ, մեզի հայերի պատճառով, այս փորձանքը պատահեց...

Թէ կատաղի դրէլն և թէ խաթունի ազախինը, Գէօզէն, մեզիկ էին ապշած։

—Սուտ է ասում, խաթուն, դա ֆլան[12] է,—կրկնեց դրէլն։

Գօզէն այլեւս չկամբերեց, յարձակուեց քիչ առաջ իր պաշտպանուհուն դանող դրէլի վրայ և մի քանի հարուածներ իջաւ նրա գլխին.

—Անղգամ, դու խաթունին չե՞ս հաւատում։

Զարօ-խաթունը սատակ ազախնին և նորից դարձաւ դէպի դրէլն.

—Դու սխալուում ես, լաւ[13], սա իմ մօրս ազախնի աղջիկն է, խանդուրակից է հկել, հզիզի է...

—Հապա հիմա ինչ անեմ... ես դրա եաևից ընկայ, մինչդեռ ամբողջ փուղը կողոպտեցին և իմ ձեռքը ոչինչ չընկաւ...

—Ես մի անիծալի կըտամ քեզ։

—Հա, խաթուն.—և պարզամիտ քրդուհին ուրախութիւնից աչքերը սրբելով, վազից և համբուրեց խաթունի ձեռքը։

—Գօզէ, գնա իմ հին անթարին բեր։

—Խաթուն, ասա այդ եզիդու աղջկան՝ Թող Թևին կապած ուլունքէ ապարանջանն ինձ տայ, ես դրա վըրայ շատ չարչարուեցի։

Դեռ խաթունը բերանը չբացած, հայուհին կտրեց Թևի կապոյտ ուլունքէ շարանը և ձգեց նրան։

—Վա՛յ, ինչո՞ւ ուլունքի Թելը կտրեցիր...

Երբ Զարօ-խաթունը վերցրած իր հետ հզիզ աղջկան, առանձնացաւ նրա՛ս, նրանից իմանալու «մօր կողմից բերած զաղտնիքը»,նա, գրկած իր երեքամեայ մանկան, ծնկաչոք խոնարհուեց Զարօ-խաթունի առաջ և աղերսում էր փրկել իր և մանկան կեանքը։

—Զարօ-խաթուն, դուր ոսոլ խոտէ բա, խլազ կնա ..[14]

—Ըր սարէ Ամրօ, նա դուս...[15]

ՍԱՆԻՏԱՐՆԵՐ ՌԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

Բ.

Արհաւիրք...

Կոտորում, անխնայ կոտորում էին հայերին—մեծ, փոքր, տղայ. աղջիկ... Հրամանը Գօլոից էր, ՍուլԹանից, Մեծ-Վէզիր էնվէր փաշայից, ով կարող էր խըլնայել։

Զըլ կանիից մինչև Զիլանի-Զոր—գիւղերի անվերջ կոյտեր էին Թափուած. մի քարի տակ ընկած էր ալեզարդ Երունին, գրկած իր Թոռնիկներին, շաղախուած նրանց ալ-արեան մէջ, մի առուակի մէջ ընկած էր երիտասարդ կինը, ձեռքերը տարածած և ամուր գըրկած իր սրախողխող ձագուկներին, մի քանի քայլ հեռուն ընկած էին՝ անգլուխ տղամարդիկ, ջախջախուած գլխով մանուկներ, այլանդակուած վանայք և աղջիկներ, խոշտանգումների սոսկալի տառապանքներով անդամահատուած պատանիներ...

Դիակները էր իւր անկրևակայելի սարսափներով։

Շների, գայլերի և չախկալների ոհմակները աներիւղ վազկռտում էին այս ու այն կողմը, մի դիակից միւսը...

Եւ այդ սարսափների մէջից, այդ տարտարոսի ձանձապարհով անցում էր քրդական խուժանը—մեծ փոքր, կին, մարդ, բարձած իրենց ունեցած չունեցածը ձիերի. եղներին, էշերի, գոմէշների վրայ։

Տակաւին մի քանի օր առաջ այդ գրաիատանման հովտի մէջ կեանքը հռում էր, տասնեակ գիւղերի Թոնիրները առաւօտեան ծուխի փուլաններն էին վեր ածում, լեռներից լսում էր հովի կախարդական սըրընդի մեղմանուշ ձայնը, դաշտերից հայ գեղջուկի հր-

---

11. Շրջագգեստ.
12. Հայ.
13 Ուղղ.

14. Աստուած յ սիրոյն, փրկիր.
15. Ամրօյի գլուխը վկայ, մի վախիր.

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՄԱՐՕ
Հիմնադիր Հնչ. Կոտակցութեան



ԼԵՌՆԱՅ, ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԿԵԱՆ
Հիմնադիր Հնչ. Կոտակցութեան



ՌՈՒԲԵՆ ԽԱՆԱԶԱՏ
Հիմնադիր Հնչ. Կոտակցութեան

ՀԵՐՈՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆ

ՓՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Հիմնադիր Դաշ. Կոտակց.

ԱԿՆՈՒՆԻ, ԽԱՉ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Պարագլուխ Դաշն. Կոտակց.

ԵՂԻՇԷ ԹՕՓՉԵԱՆ
Պարագլուխ Դաշ. Կոտակց.

ՀԱՅ ԿՏՐՃՆԵՐԸ
Սասունցի, Տիգրանակերտցի, Վանեցի Մշեցի

մայիչ զուռնաներզը. իսկ այսօր... —Շնչահեղձ գարշահոտութեան հետ, վերեից լսւում էր ագռաւների և անպղերի սև հրամների սպասւոր «զա՜-զա՜ զա՜»ն, իսկ ցածը՝ գայլերի և չախկալների խռպոտ ոռնոցը, միացած շների հաչոցին, մարդ-պազանների վլվլոցին. և այդ արհաւրալից սեսարանը լրացնում էին բազաքակիրթ Եւրոպայի, գերմանական ինսարուկտօրների մարզած օսմանեան քաջայոգի զօրքերը, նիզամներն ու համիտիէները,որոնք անխնայ այրում, կոտորում, խողխողում էին իրենց իսկ հպատակ բոլոր հայերին, առանց սեռի և հասակի խտրութեան։

Հրամանը Պօլսից էր...

Մի հարուածով պէտք էր ոչնչացնել այն տարրը, որ դարերով պատճառ է դարձել արիւնհեղութիւնների, անվերջ պատերազմների և «սանջակը շէրիֆի»[16] նւաստացման... Չնչել հայերին, նշանակում է վերացնել նրանց պատճառով եւրոպական հզօր «դեսպուրների» միջամտութիւնը Թիւրքիայի ներքին գործերին, նշանակում է՝ ազատել Յալիֆայի երկիրը ամեն տեսակ վտանգներից.. Ո՛րպիսի մուսիլմանն այսպիսի մի սրբազան գործի համար կը խնայէր իւր բազկի մի քանի շարժումը և մի քանի անօրէն դեսպուրների աղիքները չէր դուրս ածիլ։

Եւ շարժւում էին աշխոյժ բազուկները, փայլում էին սրերն ու դաշոյնները ու անխնայ հնձում, անհամար գեսպուրներ ցած տապալում.. Արիւնը հոսում էր, ներկում քչքչան աւուններն ու աւտակները, իսկ աւերող ձեռքերն անարգել ասաջ անցնում։

Կոտորող սակեարների և համիտիէների թարուրներին[17] և ալայներին[18] հետևում էր քրդական և թիւրքական խուժանը, որ անտարբեր անցնելով այդ արհաւիրքների միջից, գիմում էր դէպի լեռնային բարձունքները, ապագայ վտանգից ապահովելու համար։ Շատ քրդուհիների և լամուկների խմբակներ, ուրախական քրքիջներով յարձակւում էին այս ու այն կողմ տարածւած դիակների վերայ և կողոպտում նրանց հագուստների ճեացորդները ..

Գնում էին իրար հետից՝ ասկեարների, համիտիէների և խուժանի աշխարհաւեր զրոհները և կատաղի հեղեղի նման իրենց հետից շէն ու պայծառ գիւղերի և աւանների փոխարէն թողնում աւերակներ ու մոխրակոյտեր։

—

Գ.

—Մեր հացը կերել է, Զարօ, չես ուզում ձեռքերս կեղտոտել այդ քաժի և իւր լակոտի արիւնով, դուրս վռնդիր, թող գնան-կորչեն։

—Ամրօ, տէր ողջ համբուրեմ...

—Դիղէ Զարօ, դու ուզում ես ինձ կախազան բարձրացնել տալ... Հասկացիր, Սուլթանի, Մահ վկայի, Շէյխ-Իւլ-Իսլամի անխախտելի հրամանն է՝ ով իննայի գեավուրին կամ պաշտպանի, թաքկացնի նրան, համարւում է բնաջինջ և ենթարկւում ճշմարիտ մուսիլմանների պատուհասին։

—Օլօ Ամրօ, ես Հազրաթի Մուհամմէդի կերևոյթանով, բոլոր իմամների անունով, քո կանաչ արևով երդուել և ուխտել եմ, որ պիտի ազատեմ այդ «խարտէն»[19] և իւր անմեղ մանկանը։ Ես իմ սրբազան ուխտս չեմ դրժելու, ինչ ուզում է՝ թող լինի...

—Իսկ եթէ պինեորական հրամանատարն իմանայ։

—Երբէք էլ չի կարող իմանալ. ես ամենքին էլ հաւատացրել եմ, որ դա նզիդու աղջիկ է, պէտք է երեխան թլպատել տամ և մուսիլման դարձնեմ։

—Դէ երեխան ձեռքից առ, իրեն քաց թող։

—Օլօ ես քեաֆիւր եմ...

—Զարօ...

—Ամրօ, յանուն մեր «թալսմա»-ի[20],

19. Հայուհի-հարս.
20. Ամուսնական ուխտ.

Հայ ռազմիկներ խրամատներում

16. Սրբազան զրօշակ.
17. Վաշտ.
18. Բանակ.



Վաղարշապատի եկեղեցին ասիրած տաճիկներից

Այսպիսի մտքերի փոխանակութեան մէջ էին ե-քիտասարդ քիւրդ աշիրն ու իր գեղատեսիլ կինը, մինչդեռ Թշուառ հայուհին-Վարդօն, գրկած իր մարմնի անբաժան մասնիկ Արմիկին, կծկուած չարդախի կիսախարխուլ դրան ետևը, երբեմն մտալախօրէն ականջը ծռեցնում էր նրանց դրան փեղկին և գերմարդկային ջանքերով աշխատում նպաստաւոր մի կարծիք դուրս կորզել այդ խօսակցութիւնից։ Ո՜հ, այդ խօսակցութիւնից էր կախուած նրա և իր մատղաշ, սիրուն, փափկիկ մանկան կեանքը։ Լսում էր նա, լսում և սրտատրոփ սպասում, որպէս մահապարտ, դատաւորների վերջին դատավճռին... Զարօ-խաթունի իւրաքանչիւր աղերսը, թախանձանքը իւր ամուսնուն,— նրան կեանք էր տալիս, յոյս ներշնչում, իսկ Ամրօ-բէկի իւրաքանչիւր մերժումը կամ բացասական կարծիքը՝ նրան տանում էր դէպի սոսկումները, ահռելի սոսկումները. նա իսկոյն պատկերացնում էր՝ իրենց այլուղ տունը, բլրլայող խոտի հակայական դէզի ահռելի խարոյկը, որի մէջ—իւր ձեռքից յափշտակելով, ոտքերից բռնած պէտք է շպրտէին զիլ ճչացող իւր աննման Արմիկին,—ինչպէս ուրիշ շատ մանուկների։ Այդ վայրկեանին Թշուառ մօր աչքերը մթնում էին, գլուխը պտտւում և յանկարծ պատին, բռնազբօսիկ ինքնամփոփմամբ հաղիւ կարողանում էր իրեն ոտքի վրայ պահել... Հոգեկան այն սոսկալի յուզումները, որ նա կրեց այդ մի քանի վայրկեանին—հաւասար էր տասն անգամ խաղխղուելու..

—Ամրօ, ես քեզ մատաղ,—նորից թախանձում էր քրդուհին,

—Էլ ես չգիտեմ, Զարօ, քո մեղքը, քո վիզը... Ես վաղը ձիս կհեծնեմ և կերթամ իմ ալաչիս, դու գիտես, ինչ ուզում ես՝ արա։

—Լաւ, Ամրօ, դու գնա՛ քեզ պատահանատուներիդ ազատիր, ամեն բան ես յանձն եմ առնում. ծայրահեղ դէպքում ամուր կպրկեմ այդ մանկան և թող ինձ էլ նրանց հետ խողխողեն...

Ցանկարծ դուռը ճոնչաց և կիսախելագարի պէս վարդօն ներս ընկաւ ամուսինների մօտ

—Ա՛ռ, Զարօ-խաթուն. առ այս մանուկը քեզ, սրկիր միայն սրան, թող ինձ խողխողեն, հոգ չէ— հէնց ես ինքս վերջ կտամ իմ այլևս անպէտք գոյութեան.—այժմ միանգամայն վստահ եմ, որ գաւակս կը փրկուի։

—Դուք երկուսդ էլ կսրկուէք, Վարդօ, կամ՝ ես էլ ձեզ հետ կխողխողուեմ... Գնա, վստահ եղիր,—ասաց բարի Զարօն կանխելով իւր ամուսնուն։

—Դու մարդ չես, Զարօ խաթուն, դու Աստուծոյ բարի հրեշտակն ես...

ԷՐԶՐՈՒՄ

Հնադարեան բերդը վերստին հայ կամաւորների գրաւած

Դ.

Լուսադէմ էր։

Լեռ ու ձոր բռնել էին Հայ կամաւորական խմբերը. տակաւին Ռուսական ռազմիկ բանակը իւր հետախուզական խմբերով շատ հեռուն էր, երբ հայ կամաւորները քիչ առաջ թողել էին, ալացիլ դէպի իրենց վաթանը, վայրկեան առաջ հասնելու և փրկուելու անօրէնների բերանը մնացած իրենց անպէտ-անօգնական ընտանիքներին ու մանրիկ զաւակներին... Գալիս էին նրբանք շնչասպառ և սրտատրոփ, գալիս էին՝ բացի անձնականին նաև իրենց գարերի փափագին, սրբազան իղձերին յագուրդ տալու, գալիս էին տասնեակ տարիների օտարութեան մէջ մաշած իրենց սիրելիների կարօտով տոչորուած սրտերի փափագին յագուրդ տալու։ Ինչ կարդ, ինչ կանոն, ինչ դիսցիպլինա կարող էր նրանց մի վայրկեան շատ հասնելուն արգելք լինել... Ձիշտ է, նրանք բոլորն էլ լցուած էին գարերի ատելութեամբ դէպի քիւրդն ու տաճիկը, բայց հայրենիքի փրկութեան յոյսը, ապագայ երջանիկ օրերի վրտտպատակերը ուժգնացրել էր նրանց հոգին և պատրաստ էին մոռացութեան տալ պատմականն ու անցեալը և ձեռք ձեռքի տալ, համբուրել իրենց վաղեմի գրացիների հետ, ուխտել նոր իրաւակարգի մէջ այսուհետև ապրել իսկական «դին այրի-կարդաշ»-ներ, անձնա-

տուր լինելով ընդհանուր Հայրենիքի Հայաստանի վերածնութեան և վերաշինութեան գործին։

Բայց չար նշաններ էին երևում...

Առաջին հայկական փուզը, որ նրանք մտան — Քօրունն էր։

Զուլմա. . զուլում...

Փողոցներում թափթփած էին հատ-հատ կնոջ, ժարդու, երեխայոց դիակներ։ Կամաւորները սարսափահար այս ու այն կողմն էին րնկել, մի կենդանի շունչ գտնելու, մի տեղկութիւն խմանալու։

Բացի կատաղի շներից ոչ մի կենդանի շունչ չէր երևում։

Կամաւորներից ոմանք վազեցին դէպի գիւղական անցուք նկուեցին, կարծելով ներկայութիւս ևս նա ծառայած կլինի որպէս ապաստարան թշուառ հայերի։ Եւ իրապէս այդպէս էր...

Աղօթարանն արդէն բացուել էր և արևի առաջին ճառագայթները Մասիսի կողմից նոր էին ընկել խըղճուկ եկեղեցւոյ անփեղկ պատուհաններից։ Կամաւորների խուժդուժը շանթահար կանգ էր առել տաճարի դրան առաջ և չէր համարձակւում ներս մտնել։ Թարմ-կարմիր հեղուկը առուակ տալով դռնից դուրս էր հոսել և լճացել գաւթում գտնուղ գերեզմանաքարերի շուրջը։

Բոլորն էլ լուռ էին, քարացել.. Այդ րոպէին ձիերից ցած թռան մի քանի յատաջապահ կօզակներ և կամաւորների հետ ներս մտան։ Ո՜րպիսի սոսկում...

Հարիւրաւոր դիակներ աջ ու ձախ թափւած էին իրար վերայ և լերդացած արիւնով իրար շաղախած մի ընդհանուր մսակոյտ էին ներկայացնում։ Բեմի վերայ ընկած էր ալեզարդ քահանան, վիզը կարած. նրա շուրջը թափթփւած էին կարմրագոյն ներկւած եկեղեցական գրքերն ու մատեաններ։ Բեմի առաջ փուած էին երկշարք մի քանի տասնեակ մանուկներ, որոնք սպանդանոցի գառնուկների նման մորթուած, ընկած էին իրենց արեան մէջ — սոսկումնալից անշարժ հայեացքներով։

Մի վայրկեան՝ նորից բոլորն էլ քարացան։

— Տղերք, վրէժ, անխնայ վրէժ,— ձայնեց կօզակների տատանապատն աչքերը սրբելով...—գնանք դէպի քիւրդ գիւղերը։

Բոլորը դուրս եկան։

— Տղերք,— ձայնեց հարիւրապետ Վահանը —այդ դիակոյտի մէջ թաղենք մեր խիղճը և աւանդ տանք այս սրբապղծւած տաճարին ու այնպէս դուրս գնանք. . Վրէժ, անխնայ, անխիղճ վրէժ — մորթել աջ ու ձախ, թող արիւնը գետ դառնայ, կատաղի գոռ, քշի ու տանի և անյատակ ծովը լցնի՝ մորթողին էր, մորթուղին էլ, գուցէ այս դժոխքը մաքրւի... Յառաջ, տղերք, այլ ևս՝ գոյթ, խիղճ, Աստւած չկայ...

—

Ե

Աստելութեամբ և վրէժի կատաղութեամբ կօզակները յարձակւել էին Գիւլա Սօրի վերայ և սրարշաւ գնում էին աջ ու ձախ, սրերի անկրկնելի հարւածներով հնձում անխնայ պատահող քիւրդերին։

— Բրատ, քրիստոնեայ, վօտ, քրիստոնեայ,— կրկնում էր անդադար մի երիտասարդ կին մանուկը գրկին և շարունակ խաչակնքում երեսը։

— Վօտ տերե քրիստօն, — կրկնեց կատաղած մի կօզակ և սուրը բարձրացրած, ձին քշեց դէպի աղերսող կինը։ Նա ներս քաշւեց և ազատւեց գազազած կօզակի հարւածից։ Վերջինս իւր զայրոյթը թափեց մի միջահասակ քիւրդի վերայ, որ մօտակայ դռնից դուրս թռաւ՝ հալածւելով կամաւորներից ու սրի մի հարւածով ցած գլորեց նրան։

— Բրատ, քրիստոնեայ, քրիստոնեայ, նորից լըսւեց նախկին դռնից։

— Ֆած գայլ, դու ևս քրիստոնեայ,— գոչեց գնդապետ Մեխակը և նիզակը դէմ արած՝ վազեց դէպի նա։

— Վայ, ախպէր, էն կանայ մեռօնը՝ ևս քրիստոնեայ եմ, հայ եմ, անօրէնների մէջ գերի եմ։

— Մեխակ, սպասիր,— ձայնեցին միւս կամաւորները և վազեցին դէպի նա։

— Աղջի, դու հմի ևս. ինչ գործ ունիս այս պատանների մէջ. ուրիշ հայեր կմն այստեղ։

— Ո՛չ. ոչ, ոչ, մեր ողջ գիւղը կոտորեցին, մեկայն ևս և այս մանկիկս ազատեցինք մի հրաշքով։ Կոտորեցին, բոլորին, բոլորին կոտորեցին անխնայ, աչրեցին, խորտակեցին...

Այդ միջոցին ձիով մօտեցաւ հարիւրապետ Վահանը։

— Ինչ կայ տղերք, ինչ էք կանգնել մասլահաթի։

— Հարիւրապետ, այս կինը հայուհի է։

Հայուհին ակնառիշ նայեց սպային և յանկարծ մի ճիչ արձակեց և ուշաթափ ցած գլորւեց։ Մանուկը դուրս գլորւեց նրա գրկից և ճչաց։

— Վայ, Վարդօս, — գոչեց իր հերթին մի վայրկեան քարացած հարիւրապետը և ցած թռչելով ձիուց, գրկեց մի ձեռքով ուշաթափ կնոջը, միւս ձեռքով էլ մանկանն ու ինքն էլ ուշաթափւեց։

Կամաւորները շւարել էին։

Ներսից յանդգնօրէն դուրս վազեց մի կեղտոտ քրդուհի, կաւէ ամանով ջուրը ձեռքին և սկսեց սրսկել ուշաթափ կնոջ երեսին ու սթափեցնել նրան։ Շփոթւած կամաւորները նրա ձեռքից առան ջրի ամանը և իրենք էլ սկսեցին սթափեցնել հարիւրապետին։ Քրդուհին խնամքով գրկեց մանկանը և սկսեց հայուհու ականջները քաշել։

— Տղերք, հրաշք էր... Ուր է Վարդօս,— նորից մրմնջաց հարիւրապետը և կրկին կուշաթափւեր, եթէ կամաւորներից մէկը ամուր չպահէր նրա վիզը։

— Վահան, քա դու տղամարդ չես, ինչ պատահեց քեզ,— ձայնեց կամաւորներից մի ուրիշը, գրկելով նրա գլուխը։

— Վարդօս, իմ խնդճ Վարդօս... և նա ձեռքը մեկնեց նորից և սկսեց շարժել ուշաթափ կնոջ քիթը։

— Վահան,— մրմնջաց հայուհին աչքերը բացելով և հայեացքն ուղղելով դէպի իրեն գրկող քրդուհին. «Մամոն ան մէրդ մըն ա»[21],

— Բա Արմիկս ինչ եղաւ, Արմիկս,— անհամբերութեամբ հարցրեց Վահանը։

— «Ան մի Արմիկդ տաս»[22], — ասաց քրդուհին և գրկի մանուկն ուղղեց դէպի հարիւրապետը։

Վահանը նախ երախտապիտութեան մի հայեացք ուղղեց դէպի քրդուհին, ապա անվերջ համբոյրներ տեղաց իւր երեքամեայ մանկանն, որին ինքը առաջին անգամն էր տեսնում, որովհետև նրա ծնունդից ամիսներ առաջ էր հեռացել հայրենիքից։

— Ահա իմ փրկիչ հրեշտակս, Վահան, Զարե-խաթունը. եթէ սա չլինէր, այսօր իմ և Արմիկիդ դիակները միայն թերևս կգտնէիր սրախողխող մսակոյտերի մէջ կամ որև է դարմանանոցի մոխիրների մէջ ածխացած...

— Վայ, խաթուն, մի՞թէ քիւրդերի մէջ էլ տա կաւին մնացած կայ խիղճ և գութ։

— Խիղճը Աստծու պարգևն է, էֆէնտիմ, աժան ազգի մէջ էլ կգտնւի շատ թէ քիչ չափով,— ասաց համարձակ քրդուհին։

Գեանջեցի Մեխակը քիւրդերէն չըհասկանալով, բարկութիւնից իրեն ուտում էր, որ՝ րոպէ առաջ չէ կարողանում այդ քրդուհու մազերից բռնել և...

— Տղերք, այս տունը, այս օջախը փրկել է իմ պատիւս ու զաւակիս կեանքը,— դիմեց Վահանը ընկերներին, վարդապետական քարոզի եղանակով,— սա այսուհետև դառնալու է իմ «վիրը»-ս[23], իմ սրբութիւնըս։ Ո՛վ յանդգնի խէթ աչքով մօտենալ Զարե-խաթունի օջախին՝ վայն եկել է նրան... Յայտնեցէք համրողջ խմբին, որ դադարեցնեն այս գիւղում կոտորածը, ինչ եղել է՝ եղել... Ով գիտէ, մի գուցէ անխրատաբար և՛ խողխողւեն Զարե-խաթունի պէս անմեղ հրեշտակներ ևս...

— Բայց ընկեր Վահան..

— Ո՛չ մի բայց, Գիւլա Սօրի մէջ այլևս մարդկային արիւն չըպիտի հոսի... Զարե խաթունի գիւղը վրէժխնդրութիւնից ազատ պիտի լինի...

Լ. Լազեան

---

21. Տիկին. սա իմ ամուսինն է.
22. Այս էլ քո Արմիկդ.
23. Ուխտատեղիս.

ՌԱԶՄԻԿ ԵՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԸ ՎԱՆՈՒՄ

1) Գեներալ ԱՆԴՐԱՆԻԿ, 2) ՀԱՄԱԶԱՍՊ (հայ կամաւորական 3-րդ դրուժինայի հրամանատար), 3) Քաղաք. Միութեան լ/ազօր Ե. ԱՓԱՆԱՍԵԱՆ, 4) Վանի և Նրա շրջանի երկրապահ միլիցիայի հրամանատար ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆ, 5) Համատուս. Հնագիտ. Հնկ. գործակալ Ս. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ, 6) Բժ. Ա. ԲԱԲԱԼԵԱՆ, 7) Միլիցիայի հրահանգիչ Զ. ԶԱՆԴԱԼԵԱՆ, 8) Բժ. Կ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ, 9) Վ. ԱՀԱՐՈՆԵԱՆ, 10) ՀՐԱԶԵՂԸ, Համազասպի օգնականը, 11) ԻՇԽԱՆ, հին ռազմիկ-գործիչ, 12) Բժ. ՅԱԿՈԲԵԱՆ,

ԱՂՋԱՄՂՋԻՆ

Ամօթ, բիւր ամօթ յուսահատողին։
Դամ. Քաթ.

Խիստ անախորժ նամակ էր ստացել գրող Մերտկեանն այդ օրը իր վաղեմի բարեկամից. նամակ, որն ինչպէս մի ահարկու դատավճիռ գալիս էր ուժգնապէս պայթելու Մարտկեանի և նրա պէս ժառանգ գործիչների գլխին. նամակ, որի հեղինակը ժխտելով մեր նորագոյն կեանքի միակ ամենավեհ և սրբազան արտայայտութիւնը—հայ կամաւորական շարժումը, գալիս էր իր անսահման զայրոյթի թոյնը ժայթքելու նրանց գլխին, ովքեր յղացել ու կազմակերպել էին այդ սուրբ գործը, համարելով զա պատճառ Թիւրքահայաստանի ամայացման։ Եւ նա—հեղինակը—վերջացնում էր իր կշտամբող նամակը հետևեալ խօսքերով.—«Այժմ ամեն ինչ վերջացած է, չկայ այլևս Թիւրքահայը, կործանուած է Թիւրքահայաստանը. հայատեաց Թշնամիների հայաջնջման քաղաքականութիւնը փայլուն կերպով ի կատար ածուեց հէնց մեր ձեռքով. պատմութիւնը իր անողոք դատաստիքը կը գրոշմի մեր ճակատին և յետնորդ սերունդը անէծքով կը յիշի մեր անունը...»

Մարտկեանը նորից կարդում էր այդ նամակը, որը նրան թւում էր արդիւնք մի խորին թիւրիմացութեան, զա նման էր շտապ արձակուած անհեռատես դատավճռի, որը միայն արտայայտում էր յուսահատ ճիչը հէգ վնասուած փոքր ոգու։ Վշտացնում էր զա Մարտկեանին, սակայն չէր զարմացնում նրան, այսպէս է եղել միշտ մարդկանց հոդերանութիւնը—յաջողութեան րոպէներին արագ դուրս են սողում անյայտ անկիւններից շատերը և ամենից բարձր ծափահարում իսկ կրը պալիս է դժբաղդութիւնը իսկոյն շուռ են գալիս նրանք և անողոք քարկոծում...

Սակայն յիրաւի րոպէն շատ լուրջ էր, կրիտիքական։ Դա մի ծանր մոմենտ էր, որ իր խեղդող յուսահատութեան սև վարագոյրի տակ ճնշել վհատեցրել էր ոչ միայն հասարակ ժողովրդին, որն ամեն ինչ արդէն անդառնալի կորած էր համարում, այլ և ամենատկուն, փորձած հասարակական գործիչներին, որոնց պարտքն էր այդպիսի րոպէներին աւելի բարձր հնչեցնելու իրանց խրոխտ յուսադրող ձայնը, որոնք պարտաւոր էին նոր ոգի ներշնչելու հէգ վհատած սրտերին...

Եւ Մարտկեանը աւելի սառն քննելով իրերի դրութիւնը, գտնում էր որ թէև իսկապէս խիստ մեծ և ողբալի էր հայ ժողովրդի դրութիւնը, ժողովրդի, որն իր մօտիկ ազատութեան արշալոյսը դեռ չողջունած, ընկել էր սև սուգի խաւարի մէջ. սակայն նա բոլորովին հեռու էր յուսահատութեան մատնուելուց, և նրան թւում էր որ այդ խաւարը նման էր լուսաղէմի աղջամղջին, որն աւելի վատ է լինում քան պիշերային միապաղաղ մութը և սակայն որից յետոյ անխուսափելի է պայծառ արշալոյսը...

Միևնոյն ժամանակ կանգ չէր առնում նրա խուզարկու միտքը, չէր նիրհում նրա մտրակող քննադատող հոգին և նա աշխատում էր յոյսի լուսաւոր շառաւիղներ որոնել համատարած սուգի խաւարի մէջ. նրա մտքում սկիզբն էին առնում նոր ծանր խնդիր-